«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/604

«19» 05 2026թ.

«ՄԱՔՍ ՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան,

Համաձայն 2026 թվականի հունվարի 30-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2026/11-1-ԵՊԲՀ-11» ծածկագրով պայմանագրի՝ «Մաքս Շին» ՍՊԸ-ն պարտավորվել է համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու մասին համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 35 օրացուցային օրերի ընթացքում մատակարարել 15 հատ սայլակ: Համաձայնագիրը երկկողմանի ստորագրվել և ուժի մեջ է մտել 2026 թվականի փետրվարի 16-ին: Մատակարարման վերջնաժամկետը սահմանված էր մինչև 2026թ մարտի 22-ը:

Բանավոր քննարկումներից հետո պարզ է դարձել, որ «Մաքս Շին» ՍՊԸ-ն հրաժարվում է մատակարարել վերոնշյալ ապրանքը:

Առաջնորդվելով վերոգրյալով, ինչպես նաև «ԷԱՃԱՊՁԲ-2026/11-1-ԵՊԲՀ-11» ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը միակողմանի լուծում է 2026 թվականի հունվարի 30-ին թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2026/11-1-ԵՊԲՀ-11» պայմանագիրն ամբողջությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

ՌԵԿՏՈՐ՝ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ